56. ՀՅՈՒԴԺԱԹԻ ՋԱԼԸՄ ԹԱԳԱՎՈՐԸ

Ժամանակով մեկ թագավոր կէղնի, անուն Հյուդժաթի Զալըմ։ Մեկ օր բարկութեն կը բռնա՝ ուր տղի գլոխ կը զարկա։ Վազիրի վրեն կը դնա կասա.— Վազի՛ր, ընձի մեկ օղորթից հեքյաթ ասող կը բերիս, օր ընձի հեքյաթ ասա, էս գիշեր անցնի, օղորթից ըլնի, օր ստից էղավ, քու գլոխդ էլ կը զարկեմ։

Վազիր հ՝ելավ ընկավ քաղքի մեջ, դըվորվի ղըվըռնեց, ասող չէղավ, դարձավ շիվար էկավ ուր տուն։

Ախչիկն ըսեց վազիրին.— Վազի՛ր, ընչի՞ հըմալ շիվար ես։

Ասեց.— Շիվար չէղնիմ՝ ի՛նչ էնիմ. թագավորը օղորթից հեքյաթ ասող կուզա, ասող չկա, իմ գլոխ կը զարկա։

Ասեց.— Քու տուն շինվի, դնա Բալալի Սելիմ տար, ուր գլխու գալած ասա՝ բոլ ա չուրի լուա։

Վազիր հ՝ելավ գնաց Սելիմին խանչեց։

Ասեց.— Սելի՛մ, թագավորը օղորթից հեքյաթ ասող կուզե, գաս էսօր ասես։

Ասեց.— Կիգամ։

Առավ Սելիմին գնաց։

Թագավոր ասեց.— Բերի՞ր, վազի՛ր։

Ասեց.— Բերի, Սելիմն եմ բերի։

Ասեց.— Սելի՛մ, օղորթից կասե՞ս, թե՞ ստից։ Սուտ կէղնի՝ գլոխդ կը զարկեմ։

Ասեց.— Թագավոր, օղորթից, բիրադի տեղեն, տեղեն խպաթով ասիմ։

— Տե,—ասեց,—ասա՛։

Ասեց.— Թագավոր, ես աչք քցեցի իմ հորեղբոր ախչկան, իրեք տարի ղոռով անչախ իմ հորեղբոր ախչիկը առա. բերեցին, պատրաստութեն տեսան, իմ հարսանիքը էրեցին։ Հարսնիքն օր պրծան, էն դիշերն օր մենք պըտի էրթենք մեր դոշակ քնենք, բիրդան մեկ ցավ պատահավ ընձի. չորս ամիս գիշեր ցերեկ ես տեղիս միչից չելա կանա։

Մեկ օր էրածս տեսա, օր Պապիկ իմ գլխու վերև կայնուկ էր, ասեց. «Սելիմ, էտ ի՞նչ օրն էս ընկեա»։ Ասի. «Պապե, կտեսնիս ինչ օր եմ ընկեա»։ Պապեն ձեռը քսեց իմ քամակի վրեն՝ սաղցա։ Ասեց. «Սելիմ, պըտի սաղնաս, հըմը պըտի Մըսըր էրթաս, քու ձեռնեն էլ մե մենծ խաթա գիգաս»։

Ասեց.— Թագավոր, հ'իմցար իմալ եմ սաղցե, ինչ օր մորից էղնինք։

Ձեն տվեցի ասի.— Հորեղբոր ախչիկ։

Ասեց.— Ջան, Սելիմ, քու ձեն զվարթ էլավ։

Ասի.— Սաղցիր եմ, շորերը բի, ես հագնիմ։

Շորերը բերեց հագա, գացի քաղքի մեջ։ Գացի ղըվըռնեցի, մեկ քարվան պատահավ։ Ասի.— Էտ ի՞նչ քարվան ա։

Ասեցին.— Էտ Մըսըրա քարվան ա, Մըսըր կէրթա. ընկա էտ քարվանի հետն ու գացի Մըսըր։ Թե մեկ օր, թե հինգ օր գացինք, հասանք Մըսըր։ Էն վախտ հասանք Մըսըր, օր Մըսրա թագավորի վրեն կռիվ են էկած։ Մըսրա թագավոր հաղթվեր էր։ Ինչ ղըգըր օր զարիր ճամփորդ մարդիկ կային, կը տաներ կռիվ կիտեր անել։ Էկան մեզի ժողվեցին տարան կռիվ։ Մենք օր գացինք հաղթվանք, մեզի բռնին տարան եսիր։ Եսիրի տեղից մենք փախանք, ընկանք սարեր, մեշեր, կանանչ ուտելով ապրանք։ Մեկ օր գացինք մեկ տեղ, մարդիկ էկան մեզի բռնեցին տարան. տարան դրեցին ղաֆասի մեջ, մեր հ'առեջ չամիչ ու խուրմա լցեցին, կերցուցին։ Մեկ օր էրածին տեսա Պապեն իմ գլխու վերև կայնուկ էր։

— Հը,— ասեց,— Սելիմ, ի՛նչ օրի ես ընկե, Պապեն մտեհա՞ն ես էրի։

— Վայ,—ասեցի,— Պապե, տեսնի՞ս իմ նեղութեն։

Ասեց.— Սելիմ, ձեռքս կը քսեմ քու ձեռքիդ վրեն, քեզի ուժ կէղնի, կը քաշես, էն ճուղը կը կոտրի, էտ տեղից դուրս կիգաս, կացինը կը վերուս կը զարկես քու ընկնրոջ ղաֆասի ճուղն էլ կը կոտրիս, կը փախնիք. էտոնք մարդակեր են, ձեզի կըպահին խլավնաք, օր քառասուն օրից ետ ձեզի մորթեն ուտեն։ Կը փախնիք, ձեր

հ՝ետևեն գընկնին, օր հասաք ջուր անցաք, էլ չեն իգա։ Հրմա, Սելիմ,—ասեց,—քու ձեռնեն մեկ մեծ խաթա գուս գիգա։

Խրտա[1] հ՝իմ ջոտ, օր էրած էր, Պապեն չկեր։ Ձեռսի թալեցի, քաշեցի, ղաֆասի գուռ կոտրավ։ Ջոռով գլոխս ի հանեցի, էտ ղաֆասից դուրս հ՝ելա, կացին վերցուցի, զարկեցի իմ ընկերոջ ղաֆասի ճուղն էլ կոտրեցի, էն էլ հանեցի։

Ասեց.— Թագավոր չե՞ս հավատա, էն ղաֆասի ճուղը իմ կուշտ ճղեր ա, արի տես, օր հավատաս։

Թագավոր իշկեց, տեսավ օր ճղեր էր։

— Էստեղից հ՝ելանք ես ու իմ ընկեր փախանք։ Մարդակերեր ընկան մեր հ՝ետևեն։ Փախանք գացինք ջուրն հ՝ընցանք. ընտոնք էկան ժողվան ջրի ափն ու ետ դարձան։ Մենք գացինք մեշեքներով մեկ ծովու ռաստ էկանք. էտ ծով շատ ձուկ կար, բերեցինք սըլա գործեցինք, կը տանենք կը զարկինք ծովու ջրի մեջ, ձկներ գընկնեն սըլի մեջ, կը բռնինք կը բերենք կուտինք։ Էն մեկ տեղ ծովու ափ քար կար, գացի պառկա քարի վրեն, սըլեն զարկեցի ջրի մեջ, ինչքան օր քարից կախ ընկա՝ սըլեն խորունկ զարկի ջրի մեջ, բիրդան ես քարից պրծա, ընկա սըլի մեջ, ընկա ծովու էրես։ Թե մեկ օր, թե հինգ օր առավ էտ սըլեն ու ընձի էտ ծովի էրես պրտրտցուց։ Մեկ օր տարավ գիշերվա մեջ տեղը մի կղզի հանեց. սըլեն գնաց դիպավ մեկ ծառի, մութ գիշեր էր, թագավոր,—ասեց,—ծառը բըռնեցի ու մացի, չուրի լուսցավ, տեսա օր հ՝ելեր էր ղրաղ, նոր սըլից իջա, գացի էտ ծովու ագեն[2]։ Շատ զարմանալի պտուղներ կեր. էտ պտուղներուց կերա, ապրա մե իրեք օր, չորս օր։ Մեկ էլ տեսա մեկ գիշեր մեկ ջանավար դուս էկավ ծովուց՝ մե անդին քար կար բերանը, բերեց դրեց մեկ ծառի տակ, ինքը ընկավ էտ ծովու ադեն պտուղներ ուտելու, քարը լուս կիտեր, իմալ օր ցերեկ, էն էլ պտուղներ կը ժողվեր կուտեր։

Ասեց.— Թագավոր, գացի էտ քարը վերցուցի, դրեցի ջերս, լուս տվեց, դրեցի բերանս՝ էլ ետ լուս տվեց, որտեղ դրեցի, լուս տվեց, իլլաճս կտրվավ, թագավոր, թութակս[3] ճղեցի, ճխտեցի։ Լուսն օր կտրվավ, թագավոր, էտ ջանավար գոռաց ու էկավ մեկ քյալլա զարկեց էտ ծառին ու սատկավ տեղոց տեղ։ Ընդրնե իրեք օրից, չորս օրից ետ մեկ էլ տեսա իրեք հատ հավքեղեն կերպի էկան, հ՝իջան ուրանց հավքեղեն շապրկներ հանեցին դրեցին էտ

---

1 Ջարթնեցի (Ծ. Բ.)։
2 Կղզի (Ծ. Բ.)։
3 Աղդրը (Ծ. Բ.)։

ծառի տակ. ես էն մեկի շապիկ գողցա։ Հ՝ելան էրկուսը ուրանց շապկըներ հազան, էն մեկին չէղավ. շատ ղրվրոնեցին չգտան, ասեցին.—Կա ու չկա Սելիմն է գողցե։ Թագավոր միալար կասեր, Գյունալիրանին պըտի տամ Սելիմին, Սելիմ թե գու ես վերցուցե, արի։

Ասեց.— Թագավոր, ծառից հ՝իջա, գացի տարա շապիկ տվեցի, հագավ, իրեքով մեկ էզան, ընձի առան ուրենց հետ ու տարան։ Տարան ուրենց թագավորի մոտ, ըսեցին. «Սելիմ բերեր ենք»։ Թագավոր բերեց պզտի ախչիկ Գյունալիբանին տվեց ընձի։

Բերեցին թագավորութեն տվեցին ընձի, ասին. «Սելիմ հողածին ա, շուտ կը հայիվորնա»։ Չորս տարի թագավորութեն էրեցի,—ասեց,—չես հավատա, էս էլ իմ թագավորութենի բազբեանը ն ա։

Թագավորը ուր մտոի մեջ ասեց. «Ես թագավոր եմ, անգին քար, բազբեանգ չունեմ, Սելիմին ունի, գլոխը կը զարնեմ, ձեռից կառնեմ»։

Ասեց.—Թագավոր, մի օր հանկարծ իմ հորեղբոր ախչիկ իմ միտքըն ըկավ, ես Գյունալիբանին ասեցի, թե ես պետք ա էրթամ իմ հոր էրկիր։

Գյունալիբանին ուր հոր ըսեց, թե. «Սելիմ կուղե էրթա ուր հոր էրկիր»։ Թագավորը իրավունք տվեց էրթալու։ Թագավոր, իրեք ախչիկ, իրեք տղեն՝ ամեն մեկ մեկ-մեկ քար փեշքեշ տվեցին ու ընձի ճամփու դրեցին՝ էկա։ Էկա էն ժամանակը հասա, օր մութն առեր էր գետին. էկա գացի իմ տունը տեսա՝ նյա՛ կրակ կար, նյա՛ ճրագ. ձեն տվեցի, թե՝ «Հորեղբոր ախչիկ»։ Ասեց. «Ջա՛ն, Սելիմ, քու ձեն էկավ»։ Ասեցի.— Ճրագ էրա։ Ասեց.— Ընձի ո՞րտեն ա ճրագ ու կրակ, օր ես ճրագ էնիմ։ Ասեցի.— Թե էս մոտիկ տեղանքն ձեթ կա՞ ծախու։

Ասեց.— Թագավորի ձիթխած կը ծախեն։

Ասեց.—Թագավոր քու ժամանակ չէր, քու հոր ժամանակն էր։ Գացի՝ մեկ նուկի ընձի ձեթ տվեք։ Ուստեն գնաց կարասի մոտ չափելու, ինչքան օր ուզեցավ չափել, կարասը շրջավ, ձեթ բիրագի թափավ, ընձի ծեծեցին տարան բռնեցին։ Քու հերն օր մեռավ, գու թագավոր նստար, մանեփըստ էրեցիր, ընծի բանգից հանեցիր։

Թագավոր մտածեց, թե՝ «Ես ի՞նչ էնեմ, օր էտոր գլոխը կտրիմ, էտ անգին քարերը ձեռնից առնեմ»։ Ասեց՝ «Յավաշ, ես ըսեմ ըտոր, ես զուլումքա՞ր թագավոր եմ, թե՞ ատալաթ[1] թագավոր եմ, թե

---

1 Խաղաղություն, այստեղ խաղաղարար (Ս. Կ.)։

ասեց զուլումքար ես, կասեմ. «Բա քըզի բանտից ընչի՞ հանեցի»։ Թե օր ըսեց ատալաթ թագավոր իս, կասեմ՝ «Բա իմ տղի գլուխ ընչի՞ զարկեցի»։

Ասեց.— Սելի՛մ, ես ատա՞լաթ թագավոր եմ, թե զուլումքար թագավոր եմ։

Ասեց.— Թագավոր, արի դու նստի իմ տեղ, ես նստիմ քու տեղ, էտ պատասխանը տամ։

Թագավորի տեղ բանցր էր, Սելիմի տեղ ցածր էր։ Սելիմն էլ մտածեց, թե ըսիմ զուլումքար թագավոր իս, պըտի ըսե՝ «Քեզի բանտից ընչի՞ հանեցի», թե ըսիմ ատալաթ իս, պըտի ըսե. «Բա իմ տղի գլուխ ընչի՞ զարկեցի»։

Ասեց.—Դե՛հ, ասա։

Թագավորի գլխու վերև մե չուդունից թոփփուդ կախուկ էր։

Ասեց.— Դեհ, ասա։

Ասեց.— Ցավաշ, էս էրկու մարդ հ'ընցնի, նոր ասեմ։

Թագավոր ասեց.— Իմ պալատի մեջ ի՞նչ էրկու մարդ պըտի էղնի։

Աչք պրծավ ընտոնց, թոփփուզ իջուց՝ զարկեց թագավորին ըսպանեց։ Ուզեցան օր հ'ելլին Սելիմին բոնին ըսպանին, հ'ելլողին զարկեց թոփփուզով, էցկեց, տեսան օր իլլաճ չէր էղնե, բերեցին մինըրի հիմերը քանդեցին, բերեցին բարութ լցեցին, օր բարութով թալին. Սելիմի աչքը պրծավ աներոջ տան իմտատին։ Մեկ էլ տեսավ, թագավորի իրեք տղեն հավքեղեն կերպով էկան։

— Հա՛,—ըսեցին,—Սելիմ, էտ ի՞նչ օր ես ընկե։

Ասեց.— Կըտեսնի՞ք օր բարութ լըցեցին, ֆիթիլ դրեցին օր պըտի ընձի ըսպանին։

Սելիմի հետ սկսեցին յարանութեն էնել, չուրի ֆիթիլներ դրեցին, մինըրեն թալեցին, թագավորի տղեքներ մինըրի գլխուց վերցուցին տարան։

Տարան քաղքի ղրաղ դրեցին, ըսին.—Սելիմ, ի՞նչ կասես։

Ասեց.— Դացե՛ք իմ հորեղբոր ախչիկ բերեք, էսքան ժամանակ ես կարոտով եմ։

Էկան հորեղբոր ախչիկ վերցուցին տարան ուրենց էրկիր։ Բերեցին Սելիմին էլմանց դրին թագավոր, ասին.—Սելիմ հողածին ա, շուտ կը հալիվորնա, թո՛ղ մե ժամանակ թագավորութեն էնա։

Էն հասավ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։